

## Հ Ր Ա Մ Ա Ն N 243-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

«13» ՄԱՐՏԻ 2020 Թ.

ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ

ՍԱՄՎԵԼ ՍԱՐԳՍԻ ԳՈՒՐՋԱՆՅԱՆԻՆ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ  
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏԻ  
(ԾԱԾԿԱԳԻՐ՝ 12-3-22.4-Մ3-2) ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով, 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 7-րդ կետը, ինչպես նաև Պրոբացիայի ծառայության Արագածոտնի մարզային մարմնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 12-3-22.4-Մ3-2) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի հարցազրույցն անցկացնող հանձնաժողովի 2020 թվականի մարտի 12-ի եզրակացությունը և Ս. Գուրջանյանի դիմումը.

### Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Սամվել Սարգսի Գուրջանյանին 2020 թվականի մարտի 16-ից, 9 ամիս փորձաշրջանով, նշանակել Պրոբացիայի ծառայության Արագածոտնի մարզային մարմնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 12-3-22.4-Մ3-2) պաշտոնում:

2. Փորձաշրջանի ընթացքում Ս. Գուրջանյանի փորձաշրջանը համակարգող նշանակել Պրոբացիայի ծառայության Արագածոտնի մարզային մարմնի ավագ մասնագետ (ծածկագիր՝ 12-3-22.4-Մ3-1) Սերգեյ Բայբուրջյանին:

3. Աշխատավարձը սահմանել՝ 240 750 ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ժամանակավոր պաշտոնակատար՝



ՆԱՐԵԿ ՂԱԶԱՐՅԱՆ